ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2022 թվականի N 1194 - Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ քաղաք Երևան, Էրեբունի, Տիգրան Մեծի պողոտա 65ա շենք 1/4 հասցեում գտնվող՝ 98027.0 դրամ սկզբնական արժեքով, 78.3 քառ. մետր մակերեսով տարածքը, Տիգրան Մեծի պողոտա 65ա շենք, 2/4 հասցեում գտնվող՝ 66102.0 դրամ սկզբնական արժեքով, 52.8 քառ. մետր մակերեսով վարչական շենքը, Տիգրան Մեծի պողոտա 65ա շենք, 3 հասցեում գտնվող՝ 525 563 դրամ սկզբնական արժեքով, 419.8 քառ. մետր մակերեսով տարածքը և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.0756 հա ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասը (սեփականատիրոջ բաժնեմասը 0.0756 հա մակերեսով հողամասի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 783/48863, 528/48863 և 4198/48863) (այսուհետ՝ անշարժ գույք) հետ վերցնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական

գույքի կառավարման կոմիտեից և ամրացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տեղակայման նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի հետ համատեղ, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քառամսյա ժամկետում, իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հանձնման-ընդունման աշխատանքները.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում լուծել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի հետ 2004 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման թիվ 4/004 պայմանագիրը՝ լուծման հետ կապված ծախսերն իրականացնելով «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ